

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄՈՐԹԵԶԱ ՌԱՄԵԶԱՆԻ ԳԱԼԵՇԻ

**ԻՐԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ
ԱՌԵՎՏՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀԱՐԱՎ-ԱՐԵՎՄՏՅԱՆ ԱՍԻԱՅԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և
կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ -2017

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ՍԱՄՎԵԼ ՍԵՐԳԵՅԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ԿՈՐՅՈՒՆ ԱՇՈՏԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
ՌՈՒԲԻԿ ԱՇՈՏԻ ԹՈՎՄԱՍՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**


Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2017 թվականի հուլիսի 13-ին, ժամը 10.00-ին՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի 002 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0009, Երևան, Տերյան 74:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017 թվականի հունիսի 12-ին:

**002 ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ԳԻՏ.ՔԱՐՏՈՒՂԱՐ, ԴՈՑԵՆՏ**



Վ. Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Քաղաքական և տնտեսական տարբեր պատճառներով ավելի քան մեկ տասնամյակ ԱՄՆ-ի և ԵՄ-ի կողմից Իրանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցները և տնտեսական սահմանափակումները երկրի իշխանություններին հարկադրում են իրականացնել արտակարգ իրավիճակների թելադրանքով արտաքին և ներքին քաղաքականություն: Վերջինիս առավել բնորոշ գծերն են՝ ոչ միայն տնտեսական, այլ քաղաքական նկատառումներով գործընկեր երկրների ընտրություն, ազգային անվտանգության շահերին համապատասխան տնտեսության դիվերսիֆիկացումը և կառավարման չափավոր կենտրոնացումը: Այս ժամանակաշրջանում տնտեսության ազատականացման քաղաքականությունն առավելապես ուղղորդված է ազգային տնտեսության հավասարակշռության և բնակչության կենսամակարդակի պահպանմանը: Որքան էլ դժվար էր դիմակայել արևմտյան քաղաքական ու հասարակական կառույցների ճնշումներին, անցած տասնամյակի զարգացումները ապացուցեցին, որ Իրանի իշխանությունները նվազագույն տնտեսական կորուստներով պահպանեցին երկրի քաղաքական կայունությունը և միջազգային հեղինակությունը:

Բնավ չժխտելով, որ ժամանակակից պայմաններում տնտեսության ազատությունը երկրի միջազգայնացման, տնտեսական առաջընթացի և մարդկային զարգացման կարևոր նախադրյալ է, միաժամանակ Իրանի համար բավականին բարդ իրավիճակում պահանջվեցին ոչ ստանդարտ լուծումներ: Հատկապես կարևոր քայլեր էին նավթային ոլորտից տնտեսության կախվածության նվազեցումը, դոլարի և եվրոյի ճնշումը մեղմացնելու նպատակով խոշոր գործընկեր երկրների հետ ազգային արժույթներով և ապրանքափոխանակության (բարտերային) համակարգով արտաքին առևտրի զարգացումը, ներմուծման փոխարինման հետևողական քաղաքականության և տեղական արտադրությունների զարգացման միջոցով տնտեսական, մասնավորապես՝ պարենային անվտանգության ապահովումը: Այս քայլերը պահանջում էին տնտեսության կառավարման ազատական-շուկայական սկզբունքներից որոշակի շեղումներ, որոնք իրավիճակի թելադրանքով հիմնավորված էին: Բոլոր դեպքերում անցած տասնամյակի սոցիալ-տնտեսական զարգացումները, արտաքին և ներքին քաղաքականության ռազմավարությունն ու մարտավարությունը արժեքավոր փորձ են երկրի հետագա զարգացման քաղաքականության կանխորոշման և գործողությունների պլանավորման համար:

Միանգամայն կանխատեսելի է, որ Իրանի միջազգային դիրքի բարելավումը պահանջում է՝ հնարավորինս կարգավորել հարաբերությունները Արևմուտքի հետ, պահպանել քաղաքական և տնտեսական փոխշահավետ հարաբերությունները տարածաշրջանի և Արևելյան Ասիայի գործընկեր երկրների հետ, ինչպես նաև ուշադրությունը սևեռել տնտեսության ազատության գործընթացների ակտիվացման ուղղությամբ: Վերջինս երկարաժամկետ հեռանկարում միանգամայն իրատեսական է, քանի որ ազատական շուկայական տնտեսության պայմաններում, անկաշկանդ մրցակցությունը, պետական ձեռնարկությունների մասնավորեցումը, ազատ առևտուրը, արտաքին կապիտալի ներգրավումը, ազատական տնտեսավարման պահանջներին համապատասխան օրենսդրական դաշտի ստեղծումը, պետական միջամտության սահմանափակումը և հակակոռուպցիոն քաղաքականությունը՝

բարելավում են ներդրումային միջավայրը և խթանում ինչպես ներքին, այնպես էլ արտաքին առևտրային հարաբերությունների զարգացումը:

Դասական տնտեսագիտության ներկայացուցիչները բազմիցս անդրադարձել են տարբեր ժամանակաշրջանների միջպետական տնտեսական հարաբերությունների հիմնահարցերին, մեկնաբանել գործունեության հիմնական ուղղություններն ու ձևերը: Առանձին հետազոտություններում պարզաբանվել են արտաքին տնտեսական ոլորտի զարգացման, կազմակերպական, իրավական, սոցիալական հիմնախնդիրները: Սակայն, ինչպես ցույց է տալիս Իրանի փորձը, արտակարգ պայմաններում անհրաժեշտություն է առաջանում առավել մեծ ուշադրություն դարձնել տնտեսության պետական կարգավորմանը և նորովի մեկնաբանել տնտեսության ազատության առանձին հիմնադրույթներ: Բացի այդ, հետազոտությունը կատարվել է Հարավ-Արևմտյան Ասիայի մյուս երկրների տնտեսության ազատության և արտաքին առևտրի զարգացման համատեքստում, որը ոչ միայն բացահայտում է տարածաշրջանում տնտեսական զարգացման միտումները, այլև համեմատության մեջ ցուցադրում է Իրանի տնտեսական քաղաքականության հիմնական առավելությունները և թերությունները: Ավելին, առանձնահատուկ ուշադրություն է դարձվել նաև Հայաստանի Հանրապետության համապատասխան ցուցանիշների վերլուծությանը, քանի որ Իրան-Հայաստան համագործակցությունը խիստ անհրաժեշտ ու հեռանկարային է: Հատկապես ներկա փուլում, երբ նկատվում է Իրանի նկատմամբ կիրառվող սահմանափակումների մեղմացման միտում, ավելի է շեշտադրվում տնտեսության ազատության և արտաքին առևտրի դիվերսիֆիկացման կարևորությունը: Ուստի կարևորվում է նաև այդ հիմնախնդիրների հետազոտման անհրաժեշտությունը և ատենախոսության թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության հիմնական նպատակն է Հարավ-Արևմտյան Ասիայի մյուս երկրների համատեքստում Իրանի տնտեսության ազատության և արտաքին առևտրի զարգացման փոխհարաբերությունների ուսումնասիրումը և դրա շնորհիվ առավել արդյունավետ տնտեսական քաղաքականության ռազմավարական դրույթների ու դրանց իրականացման միջոցառումների մշակումը: Այդ նպատակի իրագործման համար ատենախոսությունում առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել Իրանի տնտեսության ազատության և արտաքին առևտրի զարգացման վրա տնտեսական սահմանափակումների և պատժամիջոցների ազդեցությունը,
- գնահատել Իրանի և Հարավ-Արևմտյան Ասիայի տարածաշրջանի մյուս երկրների տնտեսության ազատության և արտաքին առևտրի զարգացման միտումները,
- վերլուծել Իրանում և Հարավ-Արևմտյան Ասիայի տարածաշրջանի մյուս երկրներում արտաքին առևտրի և տնտեսության ազատության ցուցանիշների փոխկապակցվածությունը,
- ուսումնասիրել Իրանում և տարածաշրջանում արտաքին առևտրի բարելավման, տնտեսության ազատության և համագործակցության ընդլայնման հեռանկարները,
- դիտարկել Իրանի և տարածաշրջանի երկրների միջև արտաքին առևտրի զարգացման հիմնական առանձնահատկություններն ու հնարավորությունները:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը Իրանի և Հարավ-Արևմտյան Ասիայի տարածաշրջանի մյուս երկրների տնտեսության ազատությունն ու արտաքին առևտուրն է:

Հետազոտության առարկան նույն երկրների տնտեսության ազատության և արտաքին առևտրի զարգացման գործընթացն է, դրանց կատարելագործման հիմնահարցերը, արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները և զարգացման ուղիները:

Ատենախոսության թեմայի ուսումնասիրվածության աստիճանը: Այս ենթատեքստով ըստ առանձին երկրների կատարվել են մի շարք ուսումնասիրություններ: Սակայն, Իրանի և Հարավ-Արևմտյան Ասիայի տարածաշրջանի երկրների ընդգրկումով՝ արտաքին առևտրի վրա տնտեսության ազատության ազդեցության վերաբերյալ նպատակային և խորը հետազոտություն չի իրականացվել:

Ատենախոսության տեսական, տեղեկատվական ու մեթոդական հիմքերը: Ատենախոսությունում առաջադրված խնդիրների լուծման համար տեսական և մեթոդական հիմք են ծառայել տնտեսագիտության դասականների և ժամանակակից տնտեսագետների աշխատությունները: Հետազոտության հիմքում դրվել են Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ), Միջազգային առևտրի պալատի (ՄԱՊ), Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) զեկույցները, Հերիթիջ հիմնադրամի տնտեսության ազատության համաթվի ամենամյա հրապարակումները, ինչպես նաև՝ Իրանի Իսլամական Հանրապետության համապատասխան օրենքները, կառավարության որոշումները, միջազգային կազմակերպությունների հաշվետվությունները, գիտաժողովների նյութերը և համացանցի հրապարակումները:

Հետազոտության գիտական արդյունքներն ու նորույթը: Հետազոտության հիմնական գիտական արդյունքն այն է, որ Իրանի տնտեսության ազատության համաթվի մեկ և կես տասնամյակի միտումների հետազոտության միջոցով բացահայտվել է այդ գործոնի ազդեցությունը երկրի հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վրա և նախանշվել ուղիներ դրանց բարելավման համար: Որպես նորույթ առանձնացվել են հետևյալ դրույթները.

- Իրանի և Հարավ-Արևմտյան Ասիայի տարածաշրջանի մյուս երկրների տնտեսության ազատության և արտաքին առևտրի զարգացման ցուցանիշների համեմատական վերլուծության արդյունքում բացահայտվել են արտաքին տնտեսական հարաբերությունների ներկա մակարդակը և զարգացման հնարավորությունները,
- որոշվել է տնտեսության ազատության համաթվի և նրա հիմքը կազմող 10 ցուցանիշների յուրաքանչյուր միավորի փոփոխության ազդեցությունը Հարավ-Արևմտյան Ասիայի տարածաշրջանի երկրների արտաքին առևտրի վրա և կանխատեսվել են հնարավոր զարգացումները,
- բացահայտվել են իրանա-հայկական համագործակցության շրջանակներում Իրանի և ԵԱՀԿ-ի ու ԵՄ երկրների միջև արտաքին տնտեսական կապերի զարգացման հնարավորությունները:

Ատենախոսության գիտագործնական նշանակությունը: Աշխատանքում կատարված գործունեության արդյունքները, եզրակացություններն ու առաջարկություն-

ներն ունեն կիրառական բնույթ և կարող են օգտագործվել Հարավ-Արևմտյան Ասիայի երկրների արտաքին առևտրի զարգացման և ազատականացման նպատակով: Մշակված արդյունքները կարող են օգտակար լինել արտաքին առևտրի գործընթացի արդյունավետ կազմակերպման համար:

Ատենախոսության նյութերը կարող են օգտագործվել նաև տնտեսագիտական և արտաքին տնտեսական հարաբերությունների մասնագիտությունների կրթական ծրագրերում:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումը: Հետազոտության արդյունքները քննարկվել են Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Տնտեսագիտության տեսության, Ագրոբիզնեսի կազմակերպման, Ագրոբիզնեսի կառավարման, ԱՊՀ էկոնոմիկայի ամբիոնների համատեղ նիստում: Ատենախոսության հիմնական դրույթները հրատարակվել են 6 գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից ու հավելվածներից: Աշխատանքի ծավալը կազմում է 135 էջ, ներառելով 97 աղբյուր, 23 աղյուսակ և 34 գծապատկեր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է հետազոտվող թեմայի հրատապությունը և արդիականությունը, ներկայացվել է աշխատանքի հիմնական նպատակն ու խնդիրները, հետազոտության օբյեկտն ու առարկան, գիտական ուսումնասիրության տեղեկատվական և մեթոդական հիմքերը, հետազոտության հիմնախնդրի լուծման աստիճանը, գիտական նորույթը, տեսական ու գործնական նշանակությունը և կիրառման հնարավոր ուղղությունները:

Ատենախոսության առաջին՝ «Տնտեսության ազատության և արտաքին առևտրի զարգացման փոխազդեցության տեսական հիմքերը և մեթոդաբանությունը» գլխում ներկայացվել է տնտեսության ազատության էությունը և բնութագիրը, տնտեսության ազատության չափանիշների համակարգը, ինչպես նաև գնահատման մեթոդաբանությունը: Առանձնակի վերլուծության է ենթարկվել տնտեսության ազատության և արտաքին առևտրի փոխազդեցության տեսական հիմքերը:

Առաջին գլխի «Տնտեսության ազատության և ազատականացման բնութագիրը» ենթագլխում ուսումնասիրվել է տնտեսության ազատության տեսական հիմքերը և գնահատման մեթոդաբանությունը: Տնտեսագիտական գրականության մեջ հատկապես խորությամբ ուսումնասիրված է տնտեսության ազատության և տնտեսական զարգացման կապը: Ըստ Վալտեր Բլոկի /Walter Block/ բնորոշման՝ տնտեսության ազատության քաղաքացիների ազատության պահպանման անհրաժեշտ չափերի, ապրանքների ու ծառայությունների մատուցման, բաշխման ու սպառման հարցում պետության հարկադրանքի բացակայությունն է: Գուարթնու և Լոսանի /Gwartney and Lawson/ բնորոշմամբ՝ տնտեսության ազատականացում նշանակում է, որ

մարդիկ կարող են ազատ աշխատել, արտադրել, սպառել և ներդրումներ կատարել այնտեղ, որտեղ հնարավոր է ապահովել առավելագույն արդյունավետություն¹:

Տնտեսության ազատությունն այն գործընթացն է, որը տանում է ներդրումների, ապրանքների ու ծառայությունների, աշխատանքի և շուկաների նկատմամբ պետական հսկողությունը կրճատման և գերազանցապես շուկայական մեխանիզմներով կարգավորման: Իհարկե, տնտեսության ազատության չափերը և հասկանալ պետության կողմից տնտեսության կարգավորման գործառույթը բացարձակապես անուշադրության մատնելու գործելաոճ: Այն բացարձակապես պետք է ուղղորդված լինի բնակչության գործարար ակտիվության խթանմանը և երկրի մրցունակության բարձրացմանը: Տնտեսության ազատությունը կառուծվածքային բարեփոխումների քաղաքականության կարևոր վերջնարդյունքներից մեկն է, որն ուղղորդված է ինչպես ֆինանսական, այնպես էլ ապրանքային շուկաներում կառավարության ազդեցության մեղմացմանը, վերջին հաշվով՝ շուկայական խաղի կանոնների անկաշկանդ դրսևորմանը: Տարբեր տնտեսագետների մոտեցումների ընդհանրացումը ցույց է տալիս, որ տնտեսության ազատությունը բնութագրվում է հետևյալ հիմնական չափորոշիչներով².

- Ֆինանսական շուկայում պետության միջամտության սահմանափակում,
- Գների հսկողության և կարգավորման ծայր աստիճան բացառում,
- Սուբսիդավորման կրճատում և ազատ մրցակցության խթանում,
- Անցում տարադրամի լողացող փոխարժեքի,
- Արտաքին առևտրի ազատություն և քանակական սահմանափակումների վերացում,
- Ավանդների տոկոսի ազատություն:

Տնտեսական ազատությունն ավելի է կարևորվում գլոբալիզացիայի՝ ազգային տնտեսությունների և համաշխարհային տնտեսության միաձուլումն ապամաններում: Հատկապես վերջին տասնամյակներում այս երևույթի ինտենսիվ զարգացումը թելադրում է քաղաքականություն մշակողներին և միջազգային կազմակերպություններին ավելի մեծ ուշադրություն դարձնել տնտեսության ազատության մակարդակի բարձրացմանը:

Ազատականացումն ու գլոբալիզացիան հանգեցնում են ապրանքների ու ծառայությունների սահմանային փոխանակումների ծավալի ու տեսակի ավելացմանը (միջազգային առևտրի ընդլայնմանը), արտաքին և միջազգային ուղղակի ներդրումների հոսքի մեծացմանը, ինչպես նաև տեխնոլոգիաների փոխանցմանն ու նորամուծական զարգացմանը:

Որպես կանոն, տնտեսության ազատությունը բնութագրվում և մեկնաբանվում է մի շարք ինտեգրալ ցուցանիշներով, որոնք դիտարկվում են երկու տարբերակով:

¹ Rasekhi Saied, Jafari Samimi Ahmad, Zamaani Akbar, Theoretical foundations of economic Freedom on commerce in an industry: A Case Study for Iran, Economic research, 2008, 24 p. [https://journals.ut.ac.ir/article_19975_8ccfe1187474004d0964d5c363456f4f.pdf]

² Kaufmann D., Kraay A., Mastruzzi M., Growth and Governance: A Reply, Journal of Politics, 69(2), Blackwell Publishing Inc., 2007, pp. 555-562, DO - 10.1111/j.1468-2508.2007.00550.x [<http://dx.doi.org/10.1111/j.1468-2508.2007.00550.x>]

Առաջինը՝ Տնտեսության ազատության համաթիվն է (SUՀ), որը հաշվարկվում է 1995թ-ից սկսած 179 երկրների համար ԱՄՆ «Ժառանգություն հիմնադրամի» (Heritage Foundation) և «Ուոլ Սթրիտ Ջոռնալ» (Wall Street Journal) թերթի կողմից: Երկրորդ տարբերակը՝ Համաշխարհային տնտեսության ազատության համաթիվը (ՀSUՀ) սկսած 1970թ-ից կազմում է Ֆրեզերի ինստիտուտը: Երկու համաթիվերն էլ ինչպես բովանդակությամբ, այնպես էլ հաշվարկման եղանակով բավականին նման են:

Գործող մեթոդաբանությամբ՝ երկրի տնտեսության ազատությունը բնութագրվում է 10 գործոններով, դրանք են՝ առևտրային քաղաքականությունը, պետության ֆինանսական միջոցները, պետության միջամտությունը, արժույթի քաղաքականությունը, արտաքին ներդրումներն ու կապիտալի հոսքը, ֆինանսական հիմնախնդիրները, աշխատավարձն ու գները, ս»փականության իրավունքը, օրենքները և շուկան: Ըստ Վալտեր Բլոկի բնորոշման՝ տնտեսության ազատության քաղաքացիների ազատության պահպանման անհրաժեշտ չափերի, ապրանքների ու ծառայությունների մատուցման, բաշխման ու սպառման հարցում պետության հարկադրանքի բացակայությունն է³:

Ինչպես նշվեց, ԱՄՆ «Ժառանգություն հիմնադրամի» և «Ուոլ Սթրիթ Ջոռնալ» թերթի կողմից յուրաքանչյուր տարի ըստ երկրների գնահատվում են հետևյալ 10 ցուցիչները⁴.

1. գործարար ազատություն,
2. առևտրի ազատություն,
3. ֆիսկալ ազատություն,
4. ազատություն կառավարությունից,
5. արժույթային ազատություն,
6. ներդրումային ազատություն,
7. ֆինանսական ազատություն,
8. սեփականության իրավունքի պաշտպանվածություն,
9. ազատությունը կոռուպցիայից,
10. աշխատանքային ազատություն:

Ըստ պրոֆեսոր Ռիչարդ Ռոլի /Richard Roll/ որպեսզի երկիրն ի վիճակի լինի հասնել բարեկեցության և ցանկալի տնտեսական աճի, պետք է նշված 10 գործոններից յուրաքանչյուրն ունենա բարենպաստ ազդ»ցություն:

Տնտեսության ազատականացման ցուցանիշի առումով պետությունները բաժանվում են հինգ խմբերի (ըստ տնտեսության ազատականացման 10 ցուցանիշների գնահատման միջին միավորի)⁵.

1. Ազատ, երբ ըստ 10 ցուցիչների գնահատման միջին միավորը 80-100 է,

³ Walter Block, Joseph Horton, and Debbie Walker, The Necessity of Free Trade, Journal of Markets & Morality 1, No 2, October 1998, pp. 192-200

⁴ Sagheb H., Naderi A., Analysis of Iran's Economic Freedom Index by the Heritage Foundation, Business studies, No 25, 2007, pp. 18-29

⁵ Jafari Samimi A., Amoli Diva K., Economic Freedom and the impact of tax policy on the performance of government (Case Study: OIC Members), Tax journal, 8(56), 2010, pp. 81-102

2. Գրեթե ազատ, երբ 70-79,9 է,
3. Հավասարակշռված ազատ, 60-69,9 է,
4. Մասամբ կառավարությունից կախված, երբ 50-59,9 է,
5. Ամբողջությամբ կառավարությունից կախված, երբ 0-49,9 է:

Առաջին գլխի «Տնտեսության ազատության և տնտեսական զարգացման մակարդակների փոխադարձ կապը» ենթագլխում նշվում է, որ այդ փոխազդեցությունը դեռևս հիմնովին չի կարևորվում, քանի որ Իրանի նկատմամբ կիրառվող սահմանափակումների թելադրանքով երկրի իշխանությունները իրականացնում են տնտեսության կառավարման կենտրոնացման քաղաքականություն:

Առաջին գլխում բավականին մանրամասն ներկայացվել է նաև տնտեսության ազատության արդյունքները: Հատկապես նշվել է, որ տնտեսության ազատությունը նպաստում է՝ տնտեսական աճի ակտիվացմանը, օտարերկրյա ներդրումների ավելացմանը, ներդրումների արդյունավետության բարձրացմանը և աղքատության նվազեցմանը, բնակչության կյանքի որակին և մարդկային կապիտալի զարգացմանը, կոռուպցիայի կրճատմանը և ժողովրդավարության ամրապնդմանը: Բացի նշված արդյունքներից, առանձնահատուկ կարևորություն է տրվել արտաքին առևտրի զարգացմանը, որը սերտորեն կապված է երկրի տնտեսության ազատության մակարդակից: Ուստի դիտարկվել են՝ ներմուծման փոխարինման և արտահանման խթանման պետական աջակցության ռազմավարության, օտարերկրյա ուղղակի ներդրումների խրախուսման, առևտրային հաշվեկշռի բարելավման և տնտեսական աճի ակտիվացման շարժընթացը և առանձնահատկությունները Հարավ-Արևմտյան Ասիայի տարածաշրջանի երկրներում: Այս տարածաշրջանը, թե սոցիալ-տնտեսական զարգացման ցուցանիշներով և թե արտադրական ներուժով խիստ խայտաբղետ է: Ընդերքը հատկապես հարուստ է քրոմի (Թուրքիա), պոլիմետաղների (Իրան, Թուրքիա), ֆոսֆորիտների, կալիական աղի (Իսրայել, Հորդանան), պղնձի (Հայաստան, Վրաստան) պաշարներով: Այդուհանդերձ, այս տարածաշրջանի հիմնական հարստությունը նավթը և բնական գազն է: Ինչպես հայտնի է նավթի և գազի համաշխարհային պաշարների ավելի քան 2/3 կենտրոնացված է Պարսից ծոցի երկրներում: Նավթի պաշարներով աշխարհի առաջին հինգ երկրներին են դասվում՝ Սաուդյան Արաբիան, Քուվեյթը, Իրաքը, Իրանը և Միացյալ Արաբական Էմիրությունները: Նավթի հանույթը և արտահանումը որոշում է Հարավ-Արևմտյան Ասիայի երկրների տեղն ու դերը համաշխարհային տնտեսության մեջ: Այս առումով հատկապես առանձնանում են Պարսից ծոցի արաբական երկրների համագործակցության խորհրդի անդամ երկրները, որոնք մտնում են աշխարհի 35 ամենահարուստ երկրների ցանկում և համարվում են ամենաբարձր ներդրումային ակտիվություն ունեցող երկրները: Բավական է նշել, որ Global Finance ամսագրի տվյալներով բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշը այս երկրներում բավականին բարձր է: Օրինակ, Քաթարը այդ ցուցանիշով ավանդաբար զբաղեցնում է

առաջին տեղը (105091 ԱՄՆ դոլար 2013թ-ին), որն անգամ ԱՄՆ-ի ցուցանիշը գերազանցում է 2 անգամ: Արաբական էմիրությունները 8-րդ տեղում է (49884 ԱՄՆ դոլար) և առաջ է անցել այնպիսի զարգացած երկրներից, ինչպիսիք են՝ Շվեդարիան, Ավստրալիան և Կանադան: Քուվեյթը 19-րդ, իսկ Սաուդյան Արաբիան 28-րդ տեղում են, Օմանը և Բահրեյնը համապատասխանաբար՝ 33 և 34-րդ տեղերում⁶: Պարսից ծոցի երկրներից Իրանը և Իրաքը համագործակցության խորհրդի կազմում չեն ներառված քաղաքական և տնտեսական որոշակի տարաձայնությունների պատճառով: Իհարկե, Իրանի պարագայում հիմնական պատճառը տնտեսական պատժամիջոցների կիրառման փաստն է: Այն հանգամանքը, որ տարբեր գնահատումներով Իրանի մոտ 100 մլրդ. ԱՄՆ դոլար օտարերկրյա ակտիվները սառեցված են, թույլ չի տալիս լինել միջազգային կապիտալի շարժի լիարժեք մասնակից: Մինչդեռ, տարածաշրջանի բոլոր երկրները պետք է օգուտ ստանան բարձր զարգացած ֆինանսական հիմնադրամներից, հզոր ֆինանսական շուկաներից և երկրների միջև բարձր կոոպերացումից: Հարավ-Արևմտյան Ասիայի տարածաշրջանի երկրների հետ փոխշահավետ համագործակցության ակտիվացումն այն լավագույն ուղին է, որը կարող է բարելավել Իրանի տնտեսության ներկայիս վիճակը: Այս առումով տնտեսության ազատության գործնական քայլերի ձեռնարկումը կարևոր ազդակ է առկա տարաձայնությունների վերացման և քաղաքական ու տնտեսական հարաբերությունների կարգավորման համար:

Ատենախոսության երկրորդ՝ «Իրանի և Հարավ-Արևմտյան Ասիայի տարածաշրջանի մյուս երկրների տնտեսության ազատության ու արտաքին առևտրի զարգացման ներկա վիճակի վերլուծությունը» գլխում առկա վիճակագրական տվյալների և համապատասխան միջազգային կազմակերպությունների հրապարակած զեկույցների հիման վրա բնութագրվել է Իրանի, ինչպես նաև Հարավ-Արևմտյան Ասիայի մյուս երկրների տնտեսության ազատության գործընթացը և վերջինիս ազդեցությունը հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների, հատկապես արտաքին առևտրի վրա:

Այս գլխի «Իրանի տնտեսության ազատության մակարդակի և մարոտնտեսական հիմնական ցուցանիշների վերլուծությունը» ենթագլխում լուսաբանվում է հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վրա տնտեսության ազատության ազդեցությունը, հատկապես բացահայտվում է տնտեսության ազատության համաթվի և դիտարկվող մակրոտնտեսական ցուցանիշների տարուղղվածությունը:

Դիցուք, աղյուսակ 1-ում ամփոփված են Իրանի համար հաշվարկված տնտեսության ազատության համաթվի արժեքները, ինչպես նաև հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները 2005-2016թթ. կտրվածքով: Կարելի է նկատել, որ դիտարկվող

⁶ The richest countries in the world // Global Finance Magazine.: <https://www.gfmag.com/global-data/economic-data/richestcountries-in-the-world>

Ժամանակահատվածում տնտեսության ազատության ինդեքսի արժեքները նվազման կայուն միտում են արձանագրել:

Աղյուսակ 1.

Իրանի տնտեսության ազատության ինդեքսը և հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներն Իրանում, 2005-2016թթ.*

Տարիները	Տնտեսության ազատության ինդեքսը	Արտահանման ծավալը, մլրդ ԱՄՆ դոլար	Ներմուծման ծավալը, մլրդ ԱՄՆ դոլար	Կառավարության ծախսերը ՀՆԱ նկատմամբ, %	Արդյունաբերական արտադրանքի աճը, %	Մեկ շնչի հաշվով ՀՆԱ (գնողունակություն), ԱՄՆ դոլլար	Բնակչության թվաքանակը, մլն.մարդ	ՀՆԱ աճ, %	ՀՆԱ անվանական, մլրդ ԱՄՆ դոլար	Գնաճ, %	Գործազրկություն, %
	Y	X1	X2	X3	X4		X5	X6	X7	X8	X9
2016	42.2	87.5	62.12	14.9	2.8	18.136	83.2	4.5	412.30	7.4	11.3
2015	41.8	64.6	52.42	15.9	2.9	17346	81.8	0.4	390.04	11.9	10.8
2014	40.3	86.5	52.1	15.9	2.4	17316	80,8	4,3	414.60	15.6	10.6
2013	43.2	93.0	60.1	15.4	-5.2	16316	79,9	-1,9	379.44	34.7	10.4
2012	42.3	67.0	70.0	17.4	0.0	16795	78,9	-6,6	382.02	30.8	12.2
2011	42.1	128.6	93.6	8.9	-2.7	17892	77,9	3,0	570.04	21.4	12.3
2010	43.4	107.5	70.0	12.2	4.0	17115	74,8	5,9	463.67	12.4	13.5
2009	44.6	69.0	59.0	10.4	4.5	16063	73,7	3,5	396.69	10.8	11.9
2008	45.0	95.1	67.3	9.3	4.8	15876	72,6	0,6	390.67	25.3	10.4
2007	45.0	63.2	45.5	12.0	3.2	15623	71,5	10,8	337.65	18.4	10.5
2006	45.0	55.4	42.5	12.5	3.0	14101	70,5	5,8	257.85	12.9	12.1
2005	50.5	38.8	31.3	13.6	3.5	13149	69,4	4,7	218.21	12.1	12.1

*Աղբյուրը. Համաշխարհային Բանկ (2016), «Համաշխարհային զարգացման ցուցանիշը»

Միևնույն ժամանակ, հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները էականորեն բարելավվել են: Այսպես, արտահանման ծավալը աճել է ավելի քան 2,2, իսկ ներմուծման ցուցանիշը՝ մոտ 2 անգամ: Բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն ավելացել է մոտ 38 %-ով: Պետական պարտքը չնայած դիտարկվող ժամանակահատվածում որոշակիորեն աճել է, սակայն ՀՆԱ-ի նկատմամբ ցուցանիշը գտնվում է խիստ ցածր մակարդակի վրա՝ ընդամենը 13.2%: Համեմատության համար նշենք, որ Հայաստանի պետական պարտքը (Կառավարության արտաքին ու ներքին պարտքը և ԿԲ պարտքը) 2017-ի կանխատեսումներով կազմելու է ՀՆԱ-ի 55.1 տոկոսը: Իրանի պաշտոնական վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ հատկապես 2012-2013 թվականներին արձանագրվել է ՀՆԱ-ի և արդյունաբերական արտադրանքի աճի տեմպերի նվազման միտում: Նույն տարիներին արձանագրվել է նաև գնաճի ամենաբարձր տեմպը՝ 39.3% և գործազրկության առավելագույն մակարդակը՝ 15.5%: Այնուհանդերձ, 2014թ. հետո Իրանի տնտեսությունը վերականգնման նշաններ է ցուցաբերում, որի վառ դրսևորումներից է 2014-16թթ. ՀՆԱ և արդյունաբերական արտադրության արտադրության աճի վերականգնումը, գնաճի զսպումը, գործազրկության մակարդակի էական կրճատումը, պետական պարտքի բեռի նվազումը, արտաքին առևտրի շրջանառության աստիճանական ընդլայնումը:

Առավել հիմնավոր վերլուծություն կատարելու համար հաշվարկվել է տնտեսության ազատության համաթվի և դիտարկվող մակրոտնտեսական ցուցանիշների զույգային կոռելացիայի գործակիցները, որոնց արժեքները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2.

Տնտեսության ազատության ինդեքսի և մակրոտնտեսական ցուցանիշների զույգային կոռելացիայի գործակիցները

Ցուցանիշների զույգը	Կոռելացիայի գործակիցը
Y,X1	-0,618
Y,X2	-0,643
Y,X3	-0,435
Y,X4	0,347
Y,X5	-0,842
Y,X6	0,311
Y,X7	-0,815
Y,X8	-0,307
Y,X9	-0,090

Կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ, տնտեսության ազատության համաթիվը որոշակիորեն կոռելացված է ՀՆԱ, բնակչության թվաքանակի, արտահանման և ներմուծման ցուցանիշների հետ: Ընդ որում, կոռելացիայի գործակիցը մի շարք դեպքերում ունի բացասական նշան, ինչը դիտարկվող մակրոտնտեսական

ցուցանիշների և տնտեսության ազատության ինդեքսի միջև բավականին ուժեղ, հակադարձ գծային կապի վկայություն կարելի է համարել: Մյուս մակրոտնտեսական ցուցանիշների պարագայում ևս (բացառություն են միայն ՀՆԱ-ն և արդյունաբերական արտադրանքի աճի ցուցանիշները) կոռելացիայի գործակցի նշանը բացասական է ստացվել, ինչը դիտարկվող երևույթների զարգացման միտումներում հակադիր ուղղվածությունների առկայության մասին է խոսում: Ինչ վերաբերում է տնտեսության ազատության ինդեքսի և ՀՆԱ, ինչպես նաև՝ արդյունաբերական արտադրանքի թողարկման աճի տեմպերի միջև առկա վիճակագրական կապին, ապա չնայած կոռելացիայի գործակցները, այս երկու ցուցանիշների դեպքում ինչպես արդեն նկատեցինք դրական նշան ունեն, ինչը համահունչ է տնտեսագիտական տրամաբանությանը, սակայն բացարձակ մեծությամբ դրանք այնքան էլ մեծ չեն ստացվել:

Ընդհանրացնելով վերլուծության արդյունքները, արձանագրվել է, որ Իրանի պարագայում տնտեսության ազատության համաթվի և առանցքային մակրոտնտեսական ցուցանիշների միջև առկա վիճակագրական կապը թույլ է և համահունչ չէ ընդունված տնտեսագիտական տրամաբանությանը: Դրա հնարավոր բացատրությունների դաշտը բավականին լայն է՝ Իրանի տնտեսական զարգացման ինքնուրույն ուղու առկայությունից, տնտեսության ազատության համընդհանուր մոտեցումների հետ թույլ շաղկապվածությունից մինչև տնտեսության ազատության ինդեքսի կառուցման մեթոդաբանության թերությունները, որոնք հնարավորություն չեն տալիս հաշվի առնել երկրի տնտեսական զարգացման մոդելի առանձնահատկությունները:

Տնտեսության ազատության համաթվի առավել ամբողջական ուսումնասիրության նպատակով այն ներկայացվել է Հարավ-Արևմտյան Ասիայի երկրների համապատասխան ցուցանիշների համեմատական վերլուծությամբ:

Հարավ-Արևմտյան Ասիայի երկրներն ընդունված է բաժանել երկու տնտեսա-աշխարհաքաղաքական գոտիների՝

1. Կովկասի պետություններ (Հայաստան, Ադրբեջան, Վրաստան),
2. Մերձավոր Արևելքի պետություններ (Բահրեյն, Իրան, Իրաք, Իսրայել, Հորդանան, Քուվեյթ, Լիբանան, Օման, Կատար, Սաուդյան Արաբիա, Սիրիա, Թուրքիա, Արաբական Միացյալ Էմիրություններ, Եմեն):

Ինչպես երևում է աղյուսակ 3-ից, վերջին 16 տարիների ցուցանիշների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տարածաշրջանի գրեթե բոլոր երկրներում նկատվում է տնտեսության ազատության համաթվի մակարդակի բարձրացում: Հատկապես շոշափելի առաջընթաց ունեն Վրաստանը, Քաթարը, Իսրայելը, Ադրբեջանը, Իրանը և Թուրքիան: Դրան հակառակ, ուսումնասիրվող ժամանակահատվածում տնտեսության ազատության համաթիվը նվազման միտում է դրսևորել՝ Քուվեյթում, Լիբանանում և Օմանում: Իհարկե բացարձակ մեծությամբ Իրանի, Եմենի և Սիրիայի համաթվերի արժեքը բավականին համեստ է և բարելավման անհրաժեշտությունը շեշտադրված է:

Աղյուսակ 3.
Հարավ-Արևմտյան Ասիայի երկրների տնտեսության ազատության համաթիվը 2001-2016թթ. ժամանակահատվածում*

Երկրներ	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Հայաստան	66.4	68	67.3	70.3	69.8	70.6	68.6	69.9	69.9	69.1	69.7	68.8	69.5	68.9	67.1	67.8
Ադրբեջան	50.3	53.3	54.1	53.4	54.4	53.2	54.6	55.3	58	58.8	59.7	58.9	59.5	61.3	61	61.6
Բահրեյն	75.9	75.6	76.3	75.1	71.2	71.6	71.2	72.2	74.8	76.3	77.7	75.2	76.0	75.1	73.4	74.1
Վրաստան	58.3	56.7	58.6	58.9	57.1	64.5	69.3	69.2	69.8	70.4	70.4	69.4	70.1	72.6	73	73.7
Իրան	35.9	36.4	43.2	42.8	50.5	45	45	45	44.6	43.4	42.1	42.4	42.8	40.3	41.8	42.2
Իրաք	17.2	15.6	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Իսրայել	66.1	66.9	62.7	61.4	62.6	64.4	64.8	66.3	67.6	67.7	68.5	67.8	68.5	68.4	70.5	71.2
Հորդանան	68.3	66.2	65.3	66.1	66.7	63.7	64.5	64.1	65.4	66.1	68.9	69.9	70.6	69.2	69.3	70.0
Քուվեյթ	68.2	65.4	66.7	63.6	64.6	66.5	66.4	68.1	65.6	67.7	64.8	62.5	63.1	62.3	62.5	63.1
Լիբանան	61	57.1	56.7	56.9	57.2	57.5	60.4	60	58.1	59.5	60.1	60.1	60.7	59.4	59.3	59.9
Օման	67.7	64	64.6	66.9	66.5	63.7	65.8	67.3	67	67.7	69.8	67.9	68.6	67.4	66.7	67.4
Քաթար	60	61.9	65.9	66.5	63.5	62.4	62.9	62.2	65.8	68.9	70.5	71.3	72.0	71.2	70.8	71.5
Սաուդյան Արաբիա	62.2	65.3	63.2	60.4	63	63	60.9	62.5	64.3	64.1	66.2	62.5	63.1	62.2	62.1	62.7
Սիրիա	36.6	36.3	41.3	40.6	46.3	51.2	48.3	47.2	51.3	49.4	51.3	51.2	51.7	-	-	0.0
Թուրքիա	60.6	54.2	51.9	52.8	50.6	57	57.4	59.9	61.6	63.8	64.2	62.5	63.1	64.9	63.2	63.8
ՄԱԻ	74.9	73.6	73.4	67.2	65.2	62.2	62.6	62.6	64.7	67.3	67.8	69.3	70.0	71.4	72.4	73.1
Եմեն	44.3	48.6	50.3	50.5	53.8	52.6	54.1	53.8	56.9	54.4	54.2	55.3	55.9	55.5	53.7	54.2
Տարածաշրջան (միջ.)	57.3	56.8	60.1	59.6	60.2	60.6	61.1	61.6	62.8	63.4	64.1	63.4	64.1	64.7	64.5	65.1

* Աղբյուրը՝ Heritage Foundation- Reported in worlds economic freedom index of different region of the world (2016)

Բոլոր դեպքերում, առավել մանրամասն վերլուծության համար 3-րդ աղյուսակի տվյալների հիման վրա հաշվարկվել է տարածաշրջանի երկրներում տնտեսության ազատության միջին ցուցանիշի, ստանդարտ շեղման և վարիացիայի գործակցի արժեքները (աղյուսակ 4): Ստացված տվյալները վկայում են, որ 2001-2016 թթ. ժամանակահատվածում տնտեսության ազատության միջին ցուցանիշի ամենաբարձր միավորն ունի Բահրեյնը: Իսկ Իրանն ու Իրաքն ունեն տնտեսության ազատության ամենացածր միավորը:

Հետաքրքիր է, որ Հարավ-Արևմտյան Ասիայի տարածաշրջանում Հայաստանը, Հորդանանը, Քուվեյթը, Օմանը և Սաուդյան Արաբիան ունեն տնտեսության ազատության ինդեքսի վարիացիայի ամենացածր ցուցանիշը:

Աղյուսակ 4.

2001-2016 թթ. ժամանակահատվածում Հարավ-Արևմտյան Ասիայի երկրների տնտեսության ազատության ցուցանիշի միջինը, ստանդարտ շեղումն ու վարիացիայի գործակիցը *

Երկրները	16 տարիների միջին համաթիվը	Ստանդարտ շեղումը	Վարիացիայի գործակիցը
Հայաստան	68.9	1.2	0.02
Ադրբեջան	56.7	3.5	0.06
Բահրեյն	74.5	2.0	0.03
Վրաստան	66.4	6.2	0.09
Իրան	42.7	3.4	0.08
Իրաք	16.4	1.1	0.07
Իսրայել	66.6	2.8	0.04
Հորդանան	67.1	2.3	0.03
Քուվեյթ	65.1	2.1	0.03
Լիբանան	59.0	1.5	0.03
Օման	66.8	1.6	0.02
Քաթար	66.7	4.2	0.06
Սաուդյան Արաբիա	63.0	1.5	0.02
Սիրիա	43.1	13.6	0.31
Թուրքիա	59.5	4.8	0.08
ԱՄԷ	68.6	4.3	0.06
Եմեն	53.0	3.2	0.06
Տարածաշրջան (միջ.)	61.8	2.6	0.04

* Աղբյուրը. Հաշվարկվել է 3-րդ աղյուսակի տվյալների հիման վրա՝ Excel ծրագրով:

Հարավ-Արևմտյան Ասիայի տարածաշրջանի երկրների 2001-2016 թթ. միջին տվյալներով տնտեսության ազատության ամենաբարձր ցուցանիշներ ունեն Բահրեյնը, Հայաստանը, ԱՄԷ-ն և Հորդանանը: Պետք է արձանագրել, որ այս երկրները տարածաշրջանի մյուս երկրների համեմատությամբ տնտեսական և սոցիալական

զարգացման շատ բարձր մակարդակ չունեն, ուստի տնտեսության ազատության բարձր մակարդակն ավելի շատ պետք է դիտարկել մոտ հեռանկարում կայուն զարգացման նախապայմաններից մեկը: Դիցուկ, ըստ երկրների դիտարկումը ցույց է տալիս, որ Բահրեյնի ՀՆԱ աճը 2017 և 2018 թվականներին կանխատեսվում է համապատասխանաբար՝ 2.3 և 2.5%⁷: ԱՄԷ-ի ՀՆԱ-ի աճը 2016թ. կազմում էր 2.37%, իսկ 2017 և 2018 թվականներին այն կանխատեսվում է համապատասխանաբար՝ 2.5 և 3.2%⁸: Ինչ վերաբերում է Հորդանանին, ապա ակնկալվում է, որ 2017 թ. ՀՆԱ-ի աճը կկազմի 2.9%, իսկ 2018 թ.՝ 3.2%: Հորդանանի համար 2016թ. ևս կանխատեսվել էր ՀՆԱ-ի 3.2% աճ ինչը 28%-ով ավելին էր 2015 թվականի մակարդակից⁹:

Ատենախոսության երրորդ՝ «Տնտեսության ազատության ցուցիչների փոփոխության միտումները և ազդեցությունը Իրանի և Հարավ-Արևմտյան Ասիայի տարածաշրջանի մյուս երկրների արտաքին առևտրի վրա» գլխում ուսումնասիրվել է տնտեսության ազատության համաթվի հիմնական ցուցիչները, հաշվարկվել է դրանց միջին մակարդակը, ստանդարտ շեղման և վարիացիայի գործակցի արժեքները:

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում գործարար ազատության, առևտրի ազատության և հարկային կամ ֆիսկալ ազատության ցուցանիշների միջինի, ստանդարտ շեղման և վարիացիայի գործակցի վերաբերյալ տվյալները (աղյուսակ 5):

Ինչպես նշվել է, ուսումնասիրվող ժամանակահատվածում գործարար ազատության ամենաբարձր միջին համաթիվը Բահրեյնին է՝ 81.6, որը հանդես է գալիս որպես գործարարության բավականին ազատ երկիր: Այսպես, 2001-2016թթ. միջին ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, Բահրեյնը բացարձակ առաջատար է գործարար ազատության (81.6 միավոր) և հարկային կամ ֆիսկալ ազատության ցուցանիշներով (99.6 միավոր): Ի հակադրություն դրա, Իրաքն ու Իրանն ունեն գործարար ազատության ամենացածր միջին միավորը, համապատասխանաբար՝ 41.0 և 52.7:

Համաշխարհային Բանկի 2017 թ. զեկույցի համաձայն, Իրաքի տնտեսությունը կայունացման միտում պետք է դրսևորի: ՀՆԱ-ի աճը 2017 և 2018 թվականներին կանխատեսվում է համապատասխանաբար՝ 1.9% 3.4%: Իրաքի տնտեսությունը հիմնականում հենված է նավթի վաճառքի վրա և պետության եկամուտների ավելի քան 90 տոկոսն ապահովվում է այս ոլորտից, ուստի տարածաշրջանում և երկրում խաղաղության հաստատումը կարևորագույն գործոն է տնտեսական զարգացման համար:

⁷ Տվյալներն ամփոփվել են հետևյալ աղբյուրներից՝ *A World Bank Group Flagship Report* (Global Economic Prospect)-January 2017; World Bank, Macroeconomics and Fiscal Management Global Practice, and Poverty Global Practice; www.worldbank.org/gep; <http://www.focus-economics.com/countries>

⁸ Տվյալներն ամփոփվել են հետևյալ աղբյուրներից՝ *A World Bank Group Flagship Report* (Global Economic Prospect)-January 2017; World Bank, Macroeconomics and Fiscal Management Global Practice, and Poverty Global Practice; www.worldbank.org/gep; <http://www.focus-economics.com/countries>

⁹ Նույն տեղում:

Աղյուսակ 5.

2001-2016 թթ. ժամանակահատվածում Հարավ-Արևմտյան Ասիայի երկրների գործարար ազատության, առևտրի ազատության և հարկային կամ ֆիսկալ ազատության ցուցանիշների միջինի, ստանդարտ շեղման և վարիացիայի գործակցի արժեքները*

Երկիրը	Գործարար ազատության գործակիցը			Առևտրի ազատության գործակիցը			Հարկային կամ ֆիսկալ ազատության գործակիցը		
	16 տարիների միջին համաթիվը	Ստանդարտ շեղումը	Վարիացիայի գործակիցը	16 տարիների միջին համաթիվը	Ստանդարտ շեղումը	Վարիացիայի գործակիցը	16 տարիների միջին համաթիվը	Ստանդարտ շեղումը	Վարիացիայի գործակիցը
Հայաստան	73.8	13.2	0.18	84.7	4.1	0.05	89.2	2.1	0.02
Ադրբեջան	63.6	9.1	0.14	76.2	4.8	0.06	79.0	2.1	0.03
Բահրեյն	81.6	2.5	0.03	77.7	5.2	0.07	99.6	0.7	0.01
Վրաստան	74.9	14.3	0.19	76.1	7.3	0.10	88.9	2.5	0.03
Իրան	52.7	9.1	0.17	61.0	8.6	0.14	73.9	14.0	0.19
Իրաք	41.0	3.7	0.09	40.4	0.6	0.01	10.0	0.1	0.01
Իսրայել	69.1	1.1	0.02	84.4	4.3	0.05	55.8	1.8	0.03
Հորդանան	65.1	6.7	0.10	71.8	10.7	0.15	81.1	2.7	0.03
Քուվեյթ	69.3	1.6	0.02	80.4	2.6	0.03	99.8	0.7	0.01
Լիբանան	58.4	3.8	0.07	73.3	12.2	0.17	91.9	0.9	0.01
Օման	63.4	5.4	0.09	80.3	7.6	0.10	98.4	0.7	0.01
Քաթար	64.4	9.4	0.15	79.1	4.6	0.06	96.7	5.5	0.06
Սաուդյան Արաբիա	69.5	10.9	0.16	75.0	9.5	0.13	99.5	0.7	0.01
Սիրիա	58.3	3.0	0.05	42.3	19.0	0.45	77.8	16.1	0.21
Թուրքիա	65.5	6.4	0.10	83.2	6.2	0.07	70.2	4.6	0.07
ԱՄԷ	60.7	12.0	0.20	79.6	3.1	0.04	99.8	0.7	0.01
Եմեն	62.3	10.2	0.16	71.8	6.7	0.09	80.0	4.1	0.05
Տարածաշրջան (միջ.)	65.3	4.1	0.06	72.8	5.5	0.08	81.9	2.8	0.03

* **Աղբյուրը.** Ըստ Heritage Foundation (2016)-ի, կիրառելով Excel ծրագիրը:

Հաջորդ կարևոր ցուցանիշը առևտրի ազատությունն է: Հարավարևմտյան Ասիայի տարածաշրջանում առևտրի ազատության ցուցանիշի միջինի, ստանդարտ շեղման և վարիացիայի գործակցի տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, 2001-2016 թթ. ժամանակահատվածում ամենաբարձր միջին միավոր՝ 84.7, ունի Հայաստանը, որը երկրին առևտրի ազատության ոլորտում ազատ երկրների շարքում

լինելու առավելություն է տալիս: Բացի Հայաստանից, ամենաբարձր միավորներն ունեն նաև Իսրայելն ու Թուրքիան: Իսկ Իրաքն ու Սիրիան առևտրի ազատության ցուցանիշի ամենացածր միջին միավորն ունեն: Հայաստանի առևտրի ազատության միավորը ուսումնասիրվող բոլոր տարիներին Կովկասի տարածաշրջանի միջինից ավելի բարձր է:

Ինչ վերաբերում է հարկային /հարկաբյուջետային/ ազատության ցուցանիշի միջինի, ստանդարտ շեղման և վարիացիայի գործակցի վերլուծությանը, ապա ազատության ցուցանիշի ամենաբարձր միջին միավորն ունեն Քուվեյթը, ԱՄԷ, Բահրեյնը և Սաուդյան Արաբիան՝ 99: Այս ցուցանիշով վերոնշյալ երկրներն ունեն հարկերի ոլորտում ազատ երկրների շարքում լինելու առավելություն: Ի հակադրություն դրան, 2001-2016 թթ. Իսրայելն ու Իրաքը հարկային ազատության ամենացածր միջին միավորն ունեն Կովկասի տարածաշրջանի մյուս երկրների համեմատությամբ:

Հայաստանի համար հարկային ազատության միջին միավորը 89.2 է: Այս ցուցանիշով Հայաստանը նույնպես դասակարգվում է հարկերի ոլորտում ազատ երկրների շարքին: Ինչ վերաբերում է Իրանին, ապա հատկապես գործարար ազատության և առևտրի ազատության ցուցիչները համապատասխանաբար 52.7 և 61.0 է, որը բավականին ցածր է և բացասաբար է ազդում տնտեսության ազատության ընդհանուր համաթվի վրա: Համեմատաբար բարձր է հարկային կամ ֆիսկալ ազատության գործակիցը՝ 73.9, որով Իրանը դասվում է գրեթե ազատ երկրների շարքին: Բոլոր դեպքերում այս ցուցանիշների մակարդակն անհանգստացնող է և պահանջում է ուշադրության կենտրոնում պահել տնտեսության ազատության համալիր ծրագիր իրականացնելիս:

Տնտեսության ազատության համաթվի ձևավորման վրա կարևոր ազդեցություն ունեն նաև կառավարությունից ազատության կամ կառավարության ծախսերի, դրամավարկային և ներդրումային ազատության ցուցանիշները: Ինչպես երևում է 6-րդ աղյուսակի տվյալներից, ուսումնասիրվող ժամանակահատվածում Հարավ-Արևմտյան Ասիայի տարածաշրջանում առաջին երկու ցուցանիշներով առավել բարձր մակարդակ ունեն Կովկասի երկրները:

Դրամավարկային և ներդրումային ազատության ցուցանիշներով բավականին ցածր մակարդակ ունեն Իրանը և Իրաքը: Ատենախոսության մեջ բավականին հանգամանալից ուսումնասիրվել է այս ցուցանիշների միջին մակարդակը, ստանդարտ շեղման և վարիացիայի գործակցները: Մասնավորապես նշվել է, որ դրամավարկային ազատության ցուցանիշի ամենաբարձր միջին միավորն ունեն Իսրայելը, Լիբանանն ու Հորդանանը՝ 83: Հայաստանի համար դրամավարկային ազատության միջին միավորը 80 է, որով դասվում է ազատ երկրների շարքին: Ինչ վերաբերում է ներդրումային ազատության միջինի, ստանդարտ շեղման և վարիացիայի գործակցի վերաբերյալ տվյալներին, ապա ներդրումային ազատության ցուցանիշի ամենաբարձր միջին միավորն ունի Իսրայելը: Ի հակադրություն այդ երկրի, դրամավարկային ազատության ամենացածր միջին միավորն ունեն Իրանն ու Իրաքը: Իսկ Հայաստանի միջին միավորը 70 է, որը թույլ է տալիս դասվել միջին ներդրումային ազատություն ունեցող երկրների շարքին:

Աղյուսակ 6.

2001-2016 թթ. ժամանակահատվածում Հարավ-Արևմտյան Ասիայի երկրների կառավարության ծախսերի, դրամավարկային ազատության և ներդրումային ազատության ցուցանիշների միջինի, ստանդարտ շեղման և վարիացիայի գործակցի արժեքները*

Երկիրը	Կառավարության ծախսերի գործակիցը			Դրամավարկային ազատության գործակիցը			Ներդրումային ազատության գործակիցը		
	16 տարիների միջին համաթիվը	Ստանդարտ շեղումը	Վարիացիայի գործակիցը	16 տարիների միջին համաթիվը	Ստանդարտ շեղումը	Վարիացիայի գործակիցը	16 տարիների միջին համաթիվը	Ստանդարտ շեղումը	Վարիացիայի գործակիցը
Հայաստան	88.8	2.98	0.03	80.7	3.6	0.04	70	2.6	0.04
Ադրբեջան	81.5	4.30	0.05	72.1	6.6	0.09	30	0.4	0.01
Բահրեյն	77.3	3.65	0.05	79.4	6.0	0.08	56	5.3	0.09
Վրաստան	82.5	7.09	0.09	72.0	3.9	0.05	61	12.5	0.21
Իրան	82.6	3.23	0.04	60.6	1.3	0.02	15	8.9	0.59
Իրաք	10.2	0.08	0.01	0.0	0.0	0.00	10	0.1	0.01
Իսրայել	29.8	9.52	0.32	84.6	2.5	0.03	78	6.7	0.09
Հորդանան	59.2	3.57	0.06	83.1	3.0	0.04	56	9.5	0.17
Քուվեյթ	58.2	9.60	0.16	76.5	4.9	0.06	44	9.7	0.22
Լիբանան	63.1	3.89	0.06	81.8	5.2	0.06	35	8.8	0.25
Օման	57.3	7.97	0.14	77.0	6.5	0.08	53	10.3	0.19
Քաթար	68.4	6.87	0.10	73.5	7.6	0.10	40	7.7	0.20
Սաուդյան Արաբիա	69.9	4.50	0.06	77.4	9.5	0.12	37	7.1	0.19
Սիրիա	69.7	6.55	0.09	70.4	4.0	0.06	35	5.3	0.15
Թուրքիա	71.1	13.26	0.19	62.5	13.4	0.21	51	5.0	0.10
ԱՄԷ	77.2	12.29	0.16	74.5	5.2	0.07	36	9.5	0.26
Եմեն	58.1	7.77	0.13	67.7	1.9	0.03	48	6.9	0.14
Տարածաշրջան (միջ.)	65.0	2.58	0.04	70.2	2.8	0.04	44	1.9	0.04

Աղբյուրը. Ըստ Heritage Foundation (2016)-ի, կիրառելով Excel ծրագիրը:

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում նաև ֆինանսական ազատության, սեփականության ազատության և կոռուպցիայից ազատության ցուցանիշները: Վերջիններս նույնպես մանրամասն ուսումնասիրվել են ինչպես Իրանի, այնպես էլ Հարավ-Արևմտյան Ասիայի մյուս երկրների համար: Հատկանշական է, որ այս ցուցանիշներով ազատության բավականին ցածր մակարդակ ունեն Իրանը և Իրաքը: Կոռուպցիայից ազատության ցուցանիշի ցածր մակարդակով աչքի են ընկնում նաև Կովկասի տարածաշրջանի երկրները, Սիրիան և Եմենը:

Աղյուսակ 7.
2001-2016 թթ. ժամանակահատվածում Հարավ-Արևմտյան Ասիայի երկրների ֆինանսական ազատության, սեփականության ազատության և կոռուպցիայից ազատության ցուցանիշների միջինի, ստանդարտ շեղման և վարիացիայի գործակցի արժեքները*

Երկիրը	Ֆինանսական ազատություն			Սեփականության ազատություն			Կոռուպցիայից ազատություն		
	միլիարդ դոլար ընդհանուր	ժողովրդ մեկին	միլիարդ դոլար ընդհանուր	միլիարդ դոլար ընդհանուր	ժողովրդ մեկին	միլիարդ դոլար ընդհանուր	միլիարդ դոլար ընդհանուր	ժողովրդ մեկին	միլիարդ դոլար ընդհանուր
Հայաստան	72.9	6.7	0.09	40.7	7.6	0.19	29.5	2.4	0.08
Ադրբեջան	35.3	5.5	0.16	27.9	2.2	0.08	20.5	2.3	0.11
Բահրեյն	82.5	3.9	0.05	62.7	3.8	0.06	58.1	7.7	0.13
Վրաստան	56.0	11.7	0.21	34.5	5.0	0.15	28.9	6.7	0.23
Իրան	10.0	0.1	0.01	10.0	0.1	0.01	22.6	7.7	0.34
Իրաք	10.0	0.1	0.01	10.0	0.1	0.01	10.1	0.2	0.02
Իսրայել	61.0	10.4	0.17	70.9	1.2	0.02	65.3	4.5	0.07
Հորդանան	64.1	4.8	0.07	54.9	5.2	0.09	48.7	3.3	0.07
Քուվեյթ	50.3	0.6	0.01	56.1	11.1	0.20	51.8	11.1	0.21
Լիբանան	65.3	4.8	0.07	31.6	4.9	0.16	25.7	9.5	0.37
Օման	56.0	5.5	0.10	50.8	1.0	0.02	56.7	9.6	0.17
Քաթար	47.8	7.0	0.15	50.8	1.0	0.02	62.8	5.2	0.08
Սաուդյան Արաբիա	42.8	9.6	0.22	45.4	4.7	0.10	41.6	12.4	0.30
Սիրիա	16.3	6.2	0.38	30.4	0.5	0.02	23.1	8.6	0.37
Թուրքիա	49.1	5.1	0.10	52.0	4.9	0.09	38.4	4.3	0.11
ԱՄԷ	45.3	8.4	0.19	50.4	15.6	0.31	65.6	12.6	0.19
Եմեն	30.3	0.5	0.01	30.4	0.5	0.02	21.9	7.1	0.33
Տարածաշրջան (միջ.)	46.8	2.5	0.05	41.7	2.7	0.06	39.5	1.2	0.03

*Աղբյուրը. Heritage Foundation- Reported in worlds economic freedom index of different region of the world (2016)

Ուսումնասիրվող ժամանակահատվածում տնտեսության ազատության համաթիվը և նրա հիմքը կազմող 10 ցուցանիշները դրական ազդեցություն է ունեցել Հարավ-Արևմտյան Ասիայի տարածաշրջանի երկրների արտաքին առևտրի վրա: Մասնավորապես, մոդելային վերլուծության արդյունքում պարզվել է, որ արտաքին առևտուրն ըստ առանձին ցուցանիշների գնահատականի բարձրացման մեկ միավորի ավելանում է (ստացված արդյունքները ներկայացված է «Եզրակացությունների» բաժնում):

Հարավ-Արևմտյան Ասիայի տարածաշրջանի երկրների արտաքին առևտրի պետական կարգավորման կարևոր տարրերից են առանձին երկրների միջև իրականացվող քաղաքականությունը: Ուստի աշխատանքում հատկապես շեշտադրվում է Իրանի և Հայաստանի առևտրա-տնտեսական քաղաքականության կատարելագործման հիմնահարցերը: Մասնավորապես նշվում է, որ վերջին տարիներին երկու երկրների միջև ապրանքաշրջանարությունը շուրջ 200 մլն դոլար է եղել, որը առկա հնարավորությունների գնահատման տեսանկյունից բավականին փոքր մեծություն է: Սա այն դեպքում, երբ Հայաստանի մաքսային սահմանը բաց է իրանական ապրանքների համար: Հայաստանը որպես Առևտրի Համաշխարհային Կազմակերպություն անդամ սահմանել է մաքսատուրքի բավականաչափ ցածր մակարդակ (0% կամ 10%): Իհարկե, ԵՏՄ (Եվրասիական տնտեսական միություն) մեջ մտնելուց հետո երրորդ երկրների համար արդեն գործում են այդ միության մաքսատուրքերը, որոնք ևս շատ բարձր չեն: Սրան հակառակ հայկական ապրանքները հեշտությամբ չեն կարող իրանական շուկա մուտք գործել: Իրականում իրանական սահմանը բաց չի հայկական ապրանքների համար:

Իրանի կողմից սահմանված բարձր մաքսատուրքերի և ոչ տարիֆային արգելքների պայմաններում գործնականում անհնար է ապրանքներ ներմուծել Իրան: Ի տարբերություն սրա, թուրքական ապրանքները առատորեն իրանական շուկա են մտնում: Եվ սա բացատրվում է Իրանի և Թուրքիայի միջև գործող արտոնյալ առևտրի պայմանագրով: Հայաստանի ԵՏՄ-ի անդամակցության պայմաններում Հայաստանի և Իրանի տնտեսական հարաբերությունների բովանդակությունը լիովին նոր իմաստ է ստանում: Երկու կարևոր հանգամանք կա: Առաջինը՝ երբ իրանական ապրանքը մուտք է գործում Հայաստան, դա հավասարազոր է տվյալ ապրանքը ԵՏՄ տարածք ներմուծելուն: Երկրորդ, երբ իրանական ներդրողը ձեռնարկություն է ստեղծում Հայաստանում (այդ թվում՝ նաև հայկական կամ այլ օտարերկրյա գործընկերների հետ համատեղ), ապա այնտեղ արտադրված արտադրանքը Հայաստանում արտադրված լինելու շնորհիվ, ԵՏՄ տարածքում կարող է տեղաշարժվել առանց մաքսատուրքի վճարման: Ատենախոսության մեջ նշվում է, որ Իրանում բազմաթիվ նավթաքիմիական, մեքենաշինական, սննդի, գյուղամթերքների վերամշակման և այլ ոլորտների խոշոր ձեռնարկություններ կան, սակայն դրանցից ոչ մեկը նույնիսկ մի փոքր մասնաճյուղ

չունի Հայաստանում: Մինչդեռ, Ռուսաստանի դեմ կիրառված պատժամիջոցների հետևանքով այնտեղ առաջացել է բազմաթիվ ապարանքների պակաս: Այս հանգամանքը թույլ է տալիս իրանցի ներդրողներին համապատասխան արտադրություն կազմակերպել Հայաստանում և առանց մաքսատուրքի վճարման այն արտահանել Ռուսաստան: Երկու երկրների տնտեսավարողները կարող են նման շահավետ ծրագրեր իրականացնել համատեղ ներդրումների միջոցով: Հայաստանում կան արհեստավարժ մասնագետներ, արտադրական գործող հզորություններ, նաև կիսակառույց գործարաններ, որոնց օգտագործումը իրանական ներդրողի համար կարող է նպաստավոր լինել: Այսինքն, իրանական արտադրողները կարող են կենտրոնանալ ոչ այնքան Հայաստանի ներքին շուկա ապրանքների ներմուծման, որքան Հայաստանի միջոցով ԵՏՄ և ԵՄ տնտեսական տարածք մտնելու հնարավորության վրա: Հայաստանը այս պարագայում կարելի է դիտել որպես Բրաուն-հայկական համատեղ արտադրության արտադրանքների համար նոր հնարավորություն ԵՏՄ և ԵՄ երկրներ մուտքի համար: Բացի այդ, նկատի ունենալով, որ արդեն սկսված են ազատ առևտրի պայմանների մշակման շուրջ Իրան-ԵՏՄ բանակցությունները, Հայաստանը այս հարցում լավագույն կարգավորող օղակը կարող է լինել: Հաշվի պետք է առնել նաև այն հանգամանքը, որ Հայաստանը և Իրանը պատմական և մշակութային ընդհանրություններ ու նաև տնտեսական հարաբերությունների որոշակի փորձ ունեն, որը քիչ կարևոր չէ բանակցություններում փոխընմբռնման հասնելու ճանապարհին:

Ի դեպ, որոշ ապրանքներ իրանցի ներդրողների կողմից Հայաստանում արտադրելու մեկ այլ պատճառ ևս կա: ԵՏՄ անդամ հինգ երկրներից միայն Հայաստանն է ընդգրկված GSP+ համակարգի մեջ, որը հնարավորություն է տալիս Հայաստանում արտադրված որոշ ապրանքներ արտահանել ԵՄ երկրներ ցածր մաքսատուրքերով: Եվ վերջապես Հայաստանում գործում են երկու ազատ տնտեսական գոտիներ, որոնք մասնագիտացած են հեռահաղորդակցության, տեղեկատվական տեխնոլոգիաների, էլեկտրոնիկայի, բիոտեխնոլոգիայի, ինչպես նաև ոսկերչության, ադամանդագործության և ժամացույցների արտադրության ոլորտներում: Այստեղ ներդրում կատարողները ազատված են ավելացված արժեքի հարկից, շահութահարկից, գույքահարկից: Ազատ գոտիներում ստեղծված են արդյունավետ աշխատանքի համար բոլոր անհրաժեշտ պայմանները, իսկ դրանցում գրանցվելը չափազանց հեշտացված է: Միաժամանակ բազմաթիվ ազատ տնտեսական գոտիներ են ստեղծված Իրանում, որոնք մեծ հնարավորություններ կարող են ընձեռել նաև հայ ներդրողներին: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Իրան-Հայաստան արտաքին առևտրի բացասական սալդոն բավականին մեծ է, իսկ ավելի հստակ՝ Հայաստանից արտահանումը Իրանից ներմուծմանը զիջում է ավելի քան երկու անգամ (աղյուսակ 8):

Հայաստանի արտաքին առևտուրը Իրանի հետ 2010-2016թթ. (հազ. դոլար)¹⁰

Տարիները	Արտահանումը	Ներմուծումը	Տարբերությունը
2016	74838.7	151150.1	-76311
2015	81727.5	182460.6	-100733
2014	84975.8	208976.6	-124000
2013	95036.0	198494.7	-103458
2012	108512.1	219413.1	-101901
2011	106250.4	216792.3	-110542
2010	84831.2	199884.7	-115053

Ըստ կանխատեսումների, հատկապես Մեղրիի ազատ տնտեսական գոտու գործունեությունից հետո, Հայաստանն ու Իրանը պետք զարգացնեն համագործակցությունը հատկապես էներգետիկայի, տրանսպորտային և զբոսաշրջային ոլորտների ուղղությամբ: Հայաստանը կարող է տարանցիկ երկիր դառնալ իրանական գազի համար, բայց դրան խոչընդոտում է Ռուսաստանը, որը մենաշնորհային դիրք ունի տարածաշրջանում, ուստի իրանական կողմը պետք է ակտիվացնի բանակցությունները Ռուսաստանի և Վրաստանի հետ: Բացի այդ բոլոր հիմքերը կա, որ Հայաստանը մոտ ապագայում դառնա իրանցի զբոսաշրջիկների համար գլխավոր երկրներից մեկը: Այս կանխատեսումների բարեհաճող իրականացման համար ի թիվս այլ պայմանների կարևոր նշանակություն ունի Իրանի տնտեսության ազատականացումը և Հայաստանում համապատասխան ենթակառուցվածքների արդիականացումն ու զարգացումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ատենախոսության այս բաժնում ամփոփվել և համառոտ ներկայացվել են հետևյալ հիմնական եզրակացությունները.

1. Իրանի պարագայում տնտեսության ազատության համաթվի և առանցքային մակրոտնտեսական ցուցանիշների միջև առկա վիճակագրական կապը, որոշակի մոտավորությամբ, համահունչ չէ առավել կիրառելի տնտեսագիտական տրամաբանությանը: Դրա հնարավոր բացատրությունների շարքը բավականին լայն է՝ Իրանի տնտեսական զարգացման ինքնուրույն ուղու առկայությունից, տնտեսության

¹⁰ Աղբյուրը. ՀՀ ԱՎԾ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2010-2016թթ. հունվար-դեկտեմբերին (ըստ տարիների):

ազատության համընդհանուր մոտեցումների հետ թույլ շաղկապվածությունից մինչև տնտեսության ազատականացման ինդեքսի կառուցման մեթոդաբանության թերությունները, որոնք հնարավորություն չեն տալիս հաշվի առնել Իրանի տնտեսական զարգացման մոդելի առանձնահատկությունները: Արտաքին տնտեսական պատժամիջոցների պայմաններում Իրանի կառավարությունն ի վնասերկրի միջազգային դիրքի, բայց ի շահ տնտեսական անվտանգության, սահմանափակել է տնտեսության ազատությունը, ուժեղացնելով պետական միջամտությունը և ընդլայնել բյուջետային աջակցության ծրագրերը:

2. Հարավ-Արևմտյան Ասիայի տարածաշրջանի երկրներում արտաքին առևտրի ինդեքսը 2001-2016թթ. ընթացքում ընդհանուր առմամբ գրանցել է բարելավման միտում: Տվյալ ժամանակահատվածում 0.72 միավոր ավելացվել է տնտեսական ազատության ցուցանիշին: Միաժամանակ՝ Բահրեյնի, Իրաքի, Քուվեյթի, Սաուդյան Արաբիայի և Միացյալ Արաբական Էմիրությունների տնտեսության ազատության ցուցանիշը նվազել է:

3. Ուսումնասիրվող ժամանակահատվածում տնտեսության ազատության համաթիվը դրական ազդեցություն է ունեցել Հարավ-Արևմտյան Ասիայի տարածաշրջանի երկրների արտաքին առևտրի վրա: Մասնավորապես, ըստ առանձին ցուցանիշների մոդելային վերլուծության արդյունքում պարզվել է, որ արտաքին առևտուրն ըստ առանձին ցուցանիշների գնահատականի բարձրացման մեկ միավորի ավելանում է.

- գործարարության ազատության ցուցիչի դեպքում՝ միջին հաշվով 0.02 միավորով,

- առևտրի ազատականացման ցուցիչի՝ 0.04 միավորով,
- հարկաբյուջետային ազատության ցուցիչի՝ 0.011 միավորով,
- կառավարության միջամտության չափի ցուցիչի՝ 0.007 միավորով,
- դրամավարկային ազատության ցուցիչի՝ 0.004 միավորով,
- ներդրումների ազատության ցուցիչի՝ 0.007 միավորով,
- ֆինանսական ազատության ցուցիչի՝ 0.012 միավորով,
- սեփականության ազատության ցուցիչի՝ 0.031 միավորով,
- կոռուպցիայից ազատության ցուցիչի՝ 0.02 միավորով,
- աշխատանքի ազատության ցուցիչի՝ 0.0007 միավորով:

4. Ներկա պայմաններում բավականին շահեկան է Հայաստանի հետ Իրանի առևտրա-տնտեսական հարաբերությունների զարգացումը: Նախ, Հայաստանի ԵՏՄ-ի անդամակցության պայմաններում, իրանական ապրանքի մուտքը Հայաստան հավասարազոր է տվյալ ապրանքը ԵՏՄ տարածք ներմուծելուն: Երկրորդ, երբ իրանական ներդրողը ձեռնարկություն է ստեղծում Հայաստանում, ապա ՀՀ-ում արտադրված արտադրանքը ԵՏՄ տարածքում կարող է տեղաշարժվել առանց մաքսատուրքի վճարման: Երրորդ, ԵՏՄ անդամ հինգ երկրներից միայն Հայաստանն է

ընդգրկված GSP+ համակարգի մեջ, որը հնարավորություն է տալիս Հայաստանում արտադրված որոշ ապրանքներ արտահանել ԵՄ երկրներ ցածր մաքսատուրքերով:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ գիտական հոդվածներում.

1. Morteza Ramezani Galeshi, A. Hovakimyan. Economic Freedom and Government Efficiency in the Organization of Islamic Conference (OIC) Countries (Տնտեսական ազատությունը և կառավարության արդյունավետությունն Իսլամական Կոնֆերանսի Կազմակերպության երկրներում) // Известия Государственного аграрного университета Армении, № 2, 2010, с. 115-120
2. Մորթեզա Ռամեզանի Գալեշի. Աղքատության ցուցանիշների վրա արտաքին առևտրի ազդեցության ուսումնասիրությունը Իրանում // Ֆինանսներ և Էկոնոմիկա, № 4, 2011 - էջ 63-65
3. Morteza Ramezani Galeshi. Evaluation of the Development of International Finance in the OIC Countries (Միջազգային ֆինանսի զարգացման գնահատումն Իսլամական Կոնֆերանսի Կազմակերպության երկրներում) // Известия Государственного аграрного университета Армении, № 3, 2011 - с. 136-142
4. Մորթեզա Ռամեզանի Գալեշի. Իրանի տնտեսական ազատության համաթվի եվ հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների փոխկապվածությունը // «Այլընտրանք» գիտական հանդես, № 2, 2016 - էջ 442-446
5. Morteza Ramezani Galeshi. Investigation of Effects of Business Fiscal and Trade Freedom on Foreign Trade in the Countries of the Region of Southwest Asia (Հարավ-Արևմտյան Ասիայի տարածաշրջանում արտաքին առևտրի վրա գործարար, ֆիսկալ և առևտրի ազատության ազդեցության ուսումնասիրումը) // «Այլընտրանք» գիտական հանդես, № 3, 2016 - էջ 238-244
6. Morteza Ramezani Galeshi. Research of Influence of Economic Freedom on Foreign Trade in Countries of Southwest Asia (Հարավ-Արևմտյան Ասիայի տարածաշրջանում արտաքին առևտրի վրա տնտեսական ազատության ազդեցության ուսումնասիրումը) // Ֆինանսներ և Էկոնոմիկա, № 7-8, 2016 - էջ 100-102

**ПРОБЛЕМЫ ЭКОНОМИЧЕСКОЙ СВОБОДЫ И РАЗВИТИЯ ВНЕШНЕЙ
ТОРГОВЛИ ИРАНА В КОНТЕКСТЕ СТРАН ЮГО-ЗАПАДНОЙ АЗИИ**

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности: 08.00.02 - «Экономика и управление хозяйством, его сферами».

Защита диссертации состоится 13-го июля 2017г. в 10⁰⁰ часов на заседании Специализированного совета по Экономике 002 ВАК РА, действующего в Национальном аграрном университете Армении, по адресу: 0009, г. Ереван, ул.Теряна 74.

РЕЗЮМЕ

Основной целью исследования является изучение отношений экономической свободы Ирана и развития внешней торговли в контексте других стран Юго-Западной Азии, а также разработать более эффективные стратегические законы экономической политики и процессы их реализации. Для достижения поставленной цели следующие задачи были предложены в диссертации:

- Изучить влияние экономических ограничений и санкций в отношении экономической свободы и развития внешней торговли Ирана
- Оценить тенденции развития свободы экономики и внешней торговли Ирана и других стран Юго-Западной Азии
- Анализировать взаимосвязь показателей внешней торговли и экономической свободы в Иране и в других странах Юго-Западной Азии
- Изучить перспективы улучшения внешней торговли и экономической свободы в Иране и регионе,
- Рассмотреть особенности и возможности развития внешней торговли между Ираном и другими странами региона.

Связь между экономической свободой и экономическим развитием исследовалась довольно глубоко в экономической литературе. Тем не менее, в отношении его влияния на внешнюю торговлю Ирана и других стран Юго-Западной Азии не проведены полноценные исследования. Индекс экономической свободы ежегодно рассчитывается газетой Wall Street Journal и исследовательским центром Heritage Foundation по большинству стран мира. Анализ экономической свободы проводится с 1995 года. Как правило, общий индекс экономической свободы страны определяется через интегральный показатель, который основан на 10 показателях. На основе текущих статистических данных и отчетов, опубликованных международными организациями, был описан процесс свободы экономики Ирана, а также других стран Юго-Западной Азии и его влияние на основные макроэкономические показатели, в частности, на внешнюю торговлю. Изучение текущих статистических отношений между индексом экономической свободы и основными макроэкономическими показателями позволили раскрыть следующие данные:

1. Тенденция оптимизации была зарегистрирована в экономической свободе в Юго-Западной Азии. Вмешательство Правительства в экономику региона было уменьшено. В этот период соответственно был добавлен 0,72 балла к индексу экономической свободы. Одновременно индекс экономической свободы Бахрейна,

Ирака, Кувейта, Саудовской Аравии и Объединенных Арабских Эмиратов уменьшился.

2. За период исследования общий индекс экономической свободы и его 10 основных индексов оказали положительное влияние на внешнюю торговлю стран Юго-Западной Азии. Согласно модельному анализу отдельных показателей, внешняя торговля растет:

- на 0,02 балла за счет улучшения делового индекса на 1 балл
- на 0,04 балла, в среднем, за улучшения индекса либерализации торговли на 1 балл
- на 0,011 балла за улучшения индекса фискальной свободы на 1 балл
- на 0,007 балла, в среднем, за улучшения государственного вмешательства на 1 балл
- на 0,004 балла, в среднем, за улучшения индекса денежно-кредитной свободы на 1 балл
- на 0,007 балла, в среднем, за улучшение индекса инвестиционной свободы на 1 балл
- на 0,012 балла, в среднем, за улучшения индекса финансовой свободы на 1 балл
- на 0,031 балла, в среднем, за улучшения индекса свободы собственности на 1 балл
- на 0,02 балла, в среднем, за улучшения индекса ликвидации коррупции на 1 балл
- на 0,0007 балла за улучшения индекса свободы работы на 1 балл.

3. Часть из стран Юго-Западной Азии достиг экономического развития, благодаря повышению эффективности, оптимального распределения ресурсов и рационального использования национальных и иностранных инвестиций. Тем не менее, эти страны нуждаются в структурных изменениях в целях осуществления экономической свободы.

4. В современных условиях весьма полезно развивать торгово-экономические отношения с Арменией. Прежде всего, в условиях членства Армении в Евразийском экономическом союзе, когда иранские товары импортируются в Армению, это эквивалентно к импортным товарам на территорию Евразийского экономического союза. Во-вторых, когда иранский инвестор занимается предпринимательством в Армении, товары, произведенные там, могут быть перемещены в рамках Евразийского экономического союза без применения таможенной пошлины. В-третьих, из 5 стран-членов ЕС, Армения включена в систему GSP+, что позволяет экспортировать некоторые товары в страны ЕС с низкими тарифами.

Следующие научные результаты были получены с помощью проведенных исследований:

- В результате сравнительного анализа показателей экономической свободы и развития внешней торговли Ирана и других стран региона Юго-Западной Азии раскрыт текущий уровень внешнеэкономических связей и возможности развития,
- Определено влияние изменений индекса экономической свободы и каждого балла из составляющих основу его 10 показателей на внешнюю торговлю стран Юго-Западной Азии и предсказаны возможности развития;
- В рамках ирано-армянского взаимодействия раскрыт возможности развития внешних экономических связей между Ираном и ЕАЭС и ЕС-м.

MORTEZA RAMEZANI GALESHI

THE ISSUES OF ECONOMIC FREEDOM AND FOREIGN TRADE DEVELOPMENT OF IRAN IN THE CONTEXT OF COUNTRIES OF SOUTHWEST ASIA

*The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the speciality:
08.00.02 – “Economics and management of the economy, its spheres”.*

*The defense of the thesis will take place on 13 July 2017, at 10⁰⁰ o'clock at the Meeting of
specialized Council 002 of the SCC of Armenia acting at the National Agrarian University of
Armenia, 74 Teryan st., Yerevan 0009*

SUMMARY

The main aim of the research is to study the relationships of economic freedom of Iran and foreign trade development in the context of other countries of South-Western Asia, as well as to develop more efficient strategic provisions of economic policy and their implementation procedures. To achieve the goal the following objectives have been proposed in the thesis:

- To study the impact of economic restrictions and sanctions on the economic freedom and foreign trade development of Iran,
- To evaluate the tendencies of the economic freedom and foreign trade development of Iran and other countries of South-Western Asia,
- To analyze the interrelations of the indexes of foreign trade and economic freedom in Iran and in other countries of South-Western Asia,
- To study the development and expansion perspectives of foreign trade improvement and economic freedom in Iran and in the region,
- To consider the peculiarities and opportunities of foreign trade development between Iran and other countries of the region.

The relation between the economic freedom and economic development is investigated rather deeply in economical literature. Anyhow in regard of its impact on foreign trade of Iran and other countries of South-Western Asia no complete investigation has been carried out. Economic liberalization has been introduced to 179 countries by USA newspapers of “Heritage Foundation” and “Wall Street Journal” since 1995. As a rule, the total number of the country economic liberalization is determined by the integral index based on 10 indicators. On the bases of the current statistical data and the reports published by international organizations the economic liberalization process of Iran, as well as other countries of South-Western Asia and its impact on the main macroeconomic indexes, particularly on the foreign trade has been described. The study of the current statistical relations between the economic liberty index and the core macroeconomic indices enabled to disclose the followings:

1. The economic liberty of the South-Western Asia has registered optimalization trend. The government intervention in the economies of the region has been decreased. In this period respectively 0.72 points have been added to the index of the economic liberty. At the same time the economic liberty index of Bahrain, Iraq, Kuwait, Saudi Arabia and the United Arab Emirates has been decreased.

2. During the study period the index of the economic liberty and the 10 indexes making its base have had a positive impact on the foreign trade of the countries of the south-Western Asia. According to the model analyses of individual indexes, the foreign trade is increasing:

- by 0,02 points upon 1 point of business index improvement,
- by 0,04 points on the average upon 1 point of trade liberalization index improvement,
- by 0,011 points upon 1 point of fiscal liberty index improvement,
- by 0,007 points on the average upon 1 point of governmental intervention improvement,
- by 0,004 points, on the average upon 1 point of monetary liberty index improvement,
- by 0,007 points on the average upon 1 point of investment liberty index improvement,
- by 0,012 points on the average upon 1 point of financial liberty index improvement,
- by 0,031 points on the average upon 1 point of ownership liberty index improvement,
- by 0,02 points on the average upon 1 point of corruption-elimination index improvement,
- by 0,0007 points upon 1 point of job liberty index improvement.

3. Part of the countries of South-Western Asia has reached economic development due to efficiency enhancement, optimal resource allocation and the rational use of national and foreign investments. Nevertheless, these countries need structural changes in order to implement economic liberalization.

4. In current conditions it is rather beneficial to develop economic-trade relations with Armenia.: First of all in conditions of Armenian membership with Eurasian Economic Union, when the Iranian goods are imported into Armenia, it is equivalent to the importation of those goods into the territory of Eurasian Economic Union. Secondly, when the Iranian investor establishes an entrepreneurship in Armenia, the goods produced there can be moved within the Eurasian Economic Union without customs duty due to the fact that it is produced in Armenia. Thirdly, from the 5 EAEU member countries only Armenia is included in the GSP+ system, which enables to export some goods to EU countries with low tariffs.

The following scientific outcomes have been derived by conducted investigations:

- In the result of comparative analysis of the indicators of the economic freedom and foreign trade development in Iran and the other countries of Southwest Asia region, the current level of foreign economic relations and development capabilities have been identified.
- The impact of each unit change in the index of economic freedom and its 10 basic indicators over foreign trade of the countries of Southwest Asia region has been determined, and the possible developments have been predicted.
- The possibilities of developing the external economic relationships between Iran and EAEU and EU in the framework of Iranian-Armenian cooperation are revealed.

